

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԲԱՅՐՈՆԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Բայրոնը այնտեղ՝ հայ ժողովրդի սրտի մէջ, իր համար տեղ էր ստեղծել: Նրա յարգանքը նրանց (հայերի - Ա. Բ.) մտաւոր ձեռքերումների, ինչպէս նաև նրա սէրը նրանց ու նրանց լեզուի նկատմամբ երկար ժամանակ կը յիշուի եւ կը գնահատուի:

Ձոն Գոնվէյ Օ'Բրայըն՝

Բայրոնը, դեռեւս իր պատանեկան տարիներին, մինչեւ առաջին ճանապարհորդութիւնը, մեծ հետաքրքրութիւն է ցուցաբերել արեւելեան ժողովուրդների պատմութեան, գրականութեան ու ականդոյթների նկատմամբ: Նա անգլերէն եւ ֆրանսերէն շատ ստեղծագործութիւններ է կարդացել Արեւելքի մասին՝ օգտուելով ինչպէս իր անձնական գրադարանում. եղած յայտնի ճանապարհորդների գրքերից, այնպէս էլ այն ժամանակուայ մի շարք հանդէսներում արեւելեան երկրների մասին տեղ գտած բազմաբնոյթ նիւթերից (Ճանապարհորդական նոթեր, գրականութեան եւ արուեստի տեսութիւն, արեւելեան բանաստեղծութեան եւ արձակի թարգմանութեան նմոյշներ եւ այլն): Այդ տարիներին նա արդէն ծանօթ է եղել «Հազար ու մի գիշեր» արաբական հէքիաթների Ա. Գալանի² ֆրանսերէն թարգ-

¹ Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը, նուազ չորրորդ, իննեակ 8 (Թարգմ. Հ. Սեւան):

² ԳԱԼԱՆ ԱՆՏՈՒԱՆ (Galland, Antoine, 1646-1715), ֆրանսիացի արեւելագէտ: Միջնադարեան արաբական յուշարձան Հազար ու մի գիշեր հէքիաթների շարքը Եւրոպային յայտնի է դարձել Ա. Գալանի՝ ոչ բոլոր գրոյցների ֆրանսերէն փոխադրութեամբ (12 հատոր, 1704-1717), ըստ որի յետագայում կատարուել են ուսուերէն, անգլերէն, գերմաներէն առաջին թարգմանութիւնները:

մանութեանը, Մոնտեսքյոյի³ Պարսկական ցամախներին, Ու. Բեկֆորդի⁴ Վատեկին, Ու. Ջոնսի⁵ արեւելագիտական ստեղծագործութիւններին ու թարգմանութիւններին, է. Գիբոնի⁶ աշխատութեանը եւ այլն: Այդ մասին է վկայում նաեւ Բայրոնի 1808 թուականի յունուարի 21-ին իր հեռաւոր ազգական եւ գրող Ռոբերտ Դալասին (1754 - 1824) ուղղուած նամակը, որտեղ նա գրում է. «Ինչ վերաբերում է ընթերցանութեանը, ես առանց չափազանցելու կարող եմ ասել, որ պատմութեան բնագաւառից կարդացել եմ բաւականին շատ: Քիչ կը գտնուեն ժողովուրդներ, որոնց պատմութեանը ես փոքր-իչ ծանօթ չլինէի՝ Հերոդոտոսից մինչեւ Գիբոն»⁷: Այս տողերը վկայում են այն մասին, որ Բայրոնը հայ ժողովրդի պատմութեանը ծանօթ է եղել առնուազն 1807-ից, քանի որ հայերը, շնորհիւ Խորենացու աշխատութեան, նոյնպէս տեղ գրաւեցին այդ թուականին հրատարակուած Գիբոնի վերոյիշեալ հանրայայտ պատմական աշխատութեան մէջ⁸: Իսկ Գիբոնի աշխատութիւնը եւ յայտնի է իր կենդանի շարադրանքով եւ սկզբնաղբիւրների մշակման որակով, իր արժանի տեղն էր գրաւում Բայրոնի անձնական գրադարանում: Գիբոնի գրքում տեղ գտած Բիւզանդիայի նկարագրութիւնը ուժեղացրեց Բայրոնի համերկրացիների ուշադրութիւնն Արեւելքի նկատմամբ, իսկ Բայրոնի համար

³ ՄՈՆՏԵՍԿՅՈՒ (Montesquieu), ԾԱՌԼ ԼՈՒԻ ԴԸ ՄԵԿՈՒՆԴԱ, ԲԱՐՈՆ ԴԸ ԼԱ ԲՐԵՒ (Brède, 1689–1755), ֆրանսիացի լուսաւորիչ, փիլիսոփայ, իրաւագէտ, գրող: Որպէս գրող ճանաչուել է Պարսկական նամակներ (1721) վէպով, որը ժԸ դարին բնորոշ փիլիսոփայական ժանրի լուսագոյն ստեղծագործութիւններից է:

⁴ ԲԵԿՖՈՐԴ ՈՒԻԼ ԵԱՄ (Beckford, William, 1760–1844), անգլիացի գրող, գլխաւոր ստեղծագործութիւնն է՝ Վատեկ. արաբական հէքիաթ երեւակայական պատմուածքը (Փրանսերէն հրատարակուել է 1782-ին, իսկ անգլերէն՝ 1786-ին):

⁵ ՋՈՆՍ ՈՒԻԼ ԵԱՄ (Jones, William, 1746–1794), բրիտանական արեւելագէտ եւ իրաւագէտ, որն Արեւմուտքում հետաքրքրութիւն է սերմանել արեւելեան ուսումնասիրութիւնների նկատմամբ: Նա ուսումնասիրել է 28 լեզուներ (լատիներէն, յունարէն, եբրայերէն, արաբերէն, պարսկերէն, չինարէն եւ այլն) մեծաւ մասամբ ինքնուրոյն կերպով:

⁶ ԳԻԲՈՆ ԷԴՈՒԱՐԴ (Gibbon, Edward), անգլիացի պատմաբան: Հիմնական աշխատութիւնն է Հռոմէական կայսրութեան անկման եւ կործանման պատմութիւնը (1776-1788):

⁷ *The letters of George Gordon, 6th Lord Byron, selected by R. G. Howarth, with an Introduction by André Maurois, London-Toronto-New York, 1933, p. 10.*

⁸ *Ed. Gibbon, The History of the Decline and Fall of the Roman Empire, in eight volumes, London, 1838 (տե՛ս, օրինակ, vol. I, էջ 348, 474, 475, 486 եւ այլն):*

այդ գիրքը երկար տարիներ մնաց իբրև խորհրդածուլթիւնների եւ բանավէճի առարկայ: Եւ միանգամայն բնական է, որ 1823-ին Իտալիայից Յունաստան մեկնելիս բանաստեղծն իր հետ է վերցնում նաեւ Գիբոնի Պատմութիւնը:

Այսպիսով, ղեռնէս մինչեւ իր առաջին ճանապարհորդութիւնը (1809-1811), Բայրոնը որոշ տեղեկութիւններ ունեցել է հայերի եւ հայ պատմութեան մասին, իսկ երկրորդ ճանապարհորդութեան ընթացքում արդէն անմիջապէս առընչուել է հայ մշակութային գործիչների հետ: Այստեղ մենք կ'անդրադառնանք այդ առընչութիւնների առանձին դրուագներին եւ դրանց արձագանքներին հայ իրականութեան մէջ:

Եթէ Բայրոնի առաջին ճանապարհորդութիւնը հիմնականում Եւրոպայի արեւելեան երկրների ժողովուրդների աւանդոյթները, բարքերն ու սովորոյթներն ուսումնասիրելու, իր կրթութիւնն աւարտելու եւ բարձր հասարակութիւն մուտք գործելու միտում ունէր, ապա երկրորդ ճանապարհորդութիւնը երկարատեւ, «ինքնակամ աքսոր» էր, քանի որ, ինչպէս յայտնի է, արդէն իսկ մեծ ճանաչման ու համբաւի տէր, բազմաթիւ բանաստեղծութիւնների եւ բանաստեղծութիւնների⁹ հեղինակ Ջորջ Գորդոն Բայրոնը, խորապէս դժգոհ իր միջավայրից, 1816-ի գարնանը հեռանում է Անգլիայից՝ այլեւս չվերադառնալու որոշմամբ: Նոյն թուականի յունիսին Բայրոնը այցելում է Շիլիոնի հուշակաւոր դղեակ, իսկ հոկտեմբերի սկզբին՝ Ջ. Հորհատուզի¹⁰ հետ Շուեյցարիայից մեկնում Իտալիա: Նախ այցելում է Միլան եւ Վերոնա, իսկ այնուհետեւ՝ ժամանում Վենետիկ, որտեղ որոշում է աւելի երկար մնալ: «Վենետիկն ինձ դուր է գալիս այնքան, ինչքան սպասում էի, իսկ իմ սպասածը շատ էր: Սա այն վայրերից մէկն է, որը ես ճանաչել եմ առանց տեսնելու, եւ որն, Արեւելքից յետոյ, ինձ միշտ ամէնից շատ է կախարդել: Ես սիրում եմ նրա մակոյկների թախծայից զուարթու-

⁹ Այդ ժամանակ արդէն լոյս էին տեսել բանաստեղծի Պարապուբեան ժամեր խորագիրը կրող բանաստեղծութիւնների ժողովածուն (1807), Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը բանաստեղծութեան առաջին - երկրորդ նուագները (1812), Անգլիական երգիչներ եւ շոտլանդական տեսարաններ (1809), Գեաւուր (1813), Ծովահէնը (1814), Լարա (1814) բանաստեղծութիւնները եւ այլն:

¹⁰ ՀՈՐՀԱՍՈՒՋ, ՋՈՆ ՔԵՄ (1786-1869), անգլիացի գրականագէտ, Բայրոնի մտերիմ ընկերը: 1809-1810 թուականներին ճանապարհորդել է Բայրոնի հետ, յետագայում նրա հետ եղել է նաեւ Շուեյցարիայում - Իտալիայում:

թիւնն ու ջրանցքների լուծթիւնը»¹¹, - 1816-ի նոյեմբերի 25-ին գրում է Բայրոնը Ջ. Մըրրէյին¹²: Հէնց վենետիկում էլ, գրեթէ իր ժամանումից անմիջապէս յետոյ, տեղի է ունենում Բայրոնի առնչութիւնը հայ իրականութեան հետ՝ Մխիթարեան միաբանութեան եկեղեցական-մտաւորականների միջոցով, որոնք հանգրուանել էին վենետիկի մօտ գտնուող Ս. Ղազար կղզում: Ինչպէս ինքն է նշում. «Երբ 1816 թուականին ժամանեցի վենետիկ, ... ես նոյնպէս, շատ ճանապարհորդների նման, խիստ տարուած էի Ս. Ղազար վանքի միաբանութեամբ, որը միաւորում է կղերական հաստատութեան բոլոր առաւելութիւնները՝ առանց դրա մոլորութիւններից որեւէ մէկի»¹³:

Այստեղ արժէ նշել, որ Բայրոնի հետաքրքրասիրութիւնը Ս. Ղազար կղզու եւ նրա բնակիչների նկատմամբ չի սահմանափակուել սոսկ սովորական ճանապարհորդի կամ զբօսաշրջիկի ցուցաբերած հետաքրքրութեամբ, այլ հիմք է հանդիսացել Մխիթարեանների եւ Բայրոնի բեղուն համագործակցութեան: Այցելելով Ս. Ղազար, Բայրոնը օրըստօրէ աւելի է ոգեւորւում «Հայոց կղզով», սիրում ու յարգում հայ ազգը, հետաքրքրւում նրա պատմութեամբ ու մշակոյթով, օժանդակում եւ աջակցում Մխիթարեանների ձեռնարկումներին: Վենետիկում անցկացրած իր առաջին ամիսների մասին մենք կարդում ենք բանաստեղծի 1816 թուականի դեկտեմբերի 24-ին թոմաս Մուրին ուղղուած նամակում. «...իմ կեանքի ընթացքը» խիստ կարգաւորւում է: Առաւօտները մակոյկով գնում եմ Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերէն թոթովելու եւ օգնելու նրանցից մէկին (խօսքը Յ. Աւգերեանի մասին է - Ա. Բ.) անգլերէնը ուղղելու անգլերէն-հայերէն քերականութեան մէջ, որը շոտտով հրատարակուելու է»¹⁴:

Բայրոնի նամակների սեղմ տողերի մէջ զգացւում է ոչ միայն բանաստեղծի ջերմ ու յարգալից վերաբերմունքը հայ վանական-գիտ-

¹¹ *The Letters of George Gordon, 6th Lord Byron*, selected by R. G. Howarth, with an Introduction by André Maurois, London-Toronto-New York, 1933, p. 167.

¹² Մըրրէյ, ՋՈՆ (1778-1843), Բայրոնի ստեղծագործութիւնների հրատարակիչը: Բայրոնը Մըրրէյի հետ պահպանել է մշտական նամակագրութիւն՝ սկսած 1811-ից մինչեւ իր մահը:

¹³ MOORE TH., *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 337.

¹⁴ *Նոյն տեղում*, էջ 330:

նականների նկատմամբ, այլեւ, որ պակաս արժէքաւոր չէ, ուրուագծւում են նրանց բնաւորութիւնն ու էութիւնն ի ցոյց դնող, բանաստեղծական խորաթափանցութեամբ դիտուած բնորոշ մանրամասներ:

Ուշագրաւ է, որ Բայրոնի քնարերգութեան այս շրջանը, երբ բանաստեղծը բուռն ոգեւորութեամբ տարուած էր հայերէնով, հայ գրականութեամբ եւ մշակոյթով, նշանաւորում է վառ ու համարձակ քնարական նորարարութեամբ (Մանֆրեդ, Տասայի գանգատը, Չայլդ Հարոլդի ուխտագնացութեան վերջին նուագը, Սարդանապալ, Կայէն եւ այլն): «Ես մտադիր էի հետեւել Ս. Գրքի հայերէն թարգմանութեանը եւ կայէնի ոճիրը շարադրել որպէս իր համայր քրոջ նկատմամբ ունեցած խանդ ու սէր, սակայն, չնայած դա բանավէճի աւելի հաւանական պատճառ էր, ես հրաժարուեցի այդ մտքից, քանի որ այն ուղղափառ չէր»¹⁵, - ասում է Բայրոնը Թ. Մեդվիլին: Իսկ Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը բանաստեղծութեան չորրորդ նուագում բանաստեղծը գրում է.

Եւ ես ուսեցի լեզուներն այլոց.-
Հարագատ դարձայ օտարի աչքին...¹⁶

Եւ մենք կարծում ենք, որ այդ լեզուներից մէկը հայերէնն է:

Բայրոնի հայերէն ուսումնասիրութիւններին իրենց ստեղծագործութիւններում անդրադարձել են ոչ միայն Մխիթարեաններն ու միւս հայ բանասէրները, այլեւ շատ օտարազգի գրողներ, բանասէրներ եւ գրաքննադատներ, ինչպէս օրինակ, Ջոն Ջեֆրսոնը (Լորդ Բայրոնը ինչպիսին որ կայ, հտ. ք., 1883), Եուրի Վեսելովսկին (Բայրոնը Ս. Ղազար կղզում, 1893), Ս. Մ. Գրեգորին (Արարատի երկիրը, 1920), Անդրէ Մորուան (Բայրոն, 1930), Անատոլի Վինոգրադովը (Բայրոն, 1936), Վիկտոր Ժիրմոնսկին (Բայրոն, 1940), Ջոն Օ'Բրայընը (Լորդ Բայրոնը, Ֆրիդրիխ ֆոն Շիլլերը եւ խորհրդաւոր հայը, 1966), Լեսլի Մարշանդը (Բայրոն. դիմանկար, 1979) եւ ուրիշներ:

Ցրանսիացի գրող Անդրէ Մորուան իր գրքում գրում է. «...ա-

¹⁵ MEDWIN TH., Journal of the Conversations of Lord Byron, noted during a Residence with his Lordship at Pisa, in the 1821 and 1822, vol. I, Paris, L. Baudry, 1825, p. 152.

¹⁶ Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը, նուագ չորրորդ, իննեակ 8 (թարգմ. Հ. Սեւան):

մէն օր Բայրոնն իր գոնդոլն էր կանգնեցնում հայկական վանքի մօտ: Կապուեւ էր հոգեւոր հայրերին եւ սիրում էր այցելել նոճիներով, Յուդայի ծառերով եւ նարնջենիներով կանաչապատուած նրանց փոքրիկ կղզին: Անցնելով ծաղկաւէտ ճեմելիքով, մտնում էր ամբողջովին սրբապատկերներով զարդարուած մի սենեակ, ուր օգնում էր հայր Պասկալ Աւգերին¹⁷ պատրաստելու Անգլերէն-հայերէն մի քերականութիւն»¹⁸: Այստեղ խօսքը վերաբերում է Հ. Աւգերեանի եւ Բայրոնի միացեալ ջանքերով 1817-ին հրատարակուած անգլլերէն-հայերէն քերականութեան ձեռնարկին՝ հայերի օգտագործման համար: Իսկ ռուս անուանի գրող Ա. Վինոգրադովի նկարագրմամբ «...մակոյկավար Տիտոն տարել է նրան (Բայրոնին - Ա. Բ.) Ս. Ղազար կղզի, որտեղ ծառերով ստուերապատուած ոչ մեծ խումբ կազմող շէնքերի մէջ երեւում էին ոսկեզօծուած խաչերով զմբէթները եւ զանգակատները: Դա գիտնական վանականների, Հայաստանի վտարանդիների, այսպէս կոչուած «մխիթարեանների» ապաստանն էր: Ի տարբերութիւն այն ժամանակուայ վենետիկեան վանքերի, որոնք Վենետիկի բարձրաշխարհիկ երիտասարդութեանը գրաւում էին որպէս զուարճութեան բազմապիսի արգելուած ձեւերի տեղեր, վենետիկեան այդ փոքրիկ վանքը հանդիսանում էր հայկական անկախութեան քօղարկուած ղեկավար կենտրոն»¹⁹: Ի հարկէ, այդ խօսքերը մի փոքր չափազանցուած են եւ գեղարուեստօրէն ազատ արտայայտուելու արդիւնք, սակայն հեռու չեն ճշմարտացիութիւնից, քանի որ Ժ. Դարի սկզբներին, երբ հայերը տառապում էին մի կողմից սուլթանական Թուրքիայի, իսկ միւս կողմից՝ շահական Պարսկաստանի լծի տակ, Վենետիկից ոչ հեռու գտնուող Ս. Ղազար փոքրիկ կղզին թերեւս միակ վայրն էր աշխարհում, որտեղ ազատ ու անկաշկանդ հնչում էր հայոց լեզուն եւ հանգամանօրէն ուսումնասիրուում հայ հինաւուրց մշակոյթն ու գրականութիւնը: Ս. Ղազար կղզում Բայրոնի հայերէն սովորելուն անդրադարձել է նաեւ ռուս անուանի գրաքննադատ Վ. Ժիրմունսկին իր Բայրոն յօդուածում. «...վենետիկեան տօնախմբութեան զուարճութիւնների միջեւ ընկած ժամա-

¹⁷ Խօսքը Յարութիւն Աւգերեանի մասին է:

¹⁸ ՄՈՐՈՒԱ ԱՆԴՐԷ, Դոն Ժուան կամ Բայրոնի կեանքը (Թարգմ. Աբրահամ Ալիքեան), «Սովետական գրող», Երեւան, 1980: - A. Maurois, Byron, tome II, Paris, Bernard Grasset, 1930, էջ 118 (Ֆրանսերէն):

¹⁹ ՎԻՆՈԳՐՈՎՈՎ Ա., Երկերի ժողովածու երեք հատորով, հտ. Գ., Մոսկուա, «Պուրոստեւոփեննայա լիտերատուրա», 1988, էջ 466 (ռուսերէն):

նականմիջոցում Ս. Ղազար հայկական վանքի վանականների մօտ ուսումնասիրում է հայոց լեզուն՝ երազելով խորամուխ լինել արեւելեան բանաստեղծութեան գաղտնիքների մէջ, եւ իր նոր բարեկամների կողմից հրատարակուած հայերէն քերականութեան առաջաբանում բացէիբաց արտայայտում է իր համակրանքը թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրութեան գործին»²⁰: Բայրոնի հայագիտական ուսումնասիրութիւններին անդրադարձել է նաեւ Ջ. Ջեֆերսոնը իր *Լորդ Բայրոնը ինչպիսին որ կայ հանրայտ եռահատոր աշխատութեան մէջ*: Նա գրում է. «Միաժամանակ նա (Բայրոնը - Ա. Բ.) իր ուշադրութեան շեղման արժանւոյն բնագաւառ գտաւ Ս. Ղազար վանքում, ուր ամէն օր իր մակոյկով գնում էր գրուցելու վանականների հետ եւ օգնելու նրանց անգլերէն-հայերէն քերականութեան ստեղծման գործում, որի հրատարակման համար նա նուիրաբերեց հազար Ֆրանկ»²¹: Ջ. Օ'Բրայընը իր յօդուածում գրում է. «Վենետիկ ժամանելուց մի քանի շաբաթ անց, Բայրոնը սկսել է ուսումնասիրել հայերէն հայկական վանքում, որտեղ գտել է հետաքրքրական ձեռագրեր ու գրքեր, ինչպէս նաեւ թարգմանութիւններ արդէն գոյութիւն չունեցող յունական բնագրերից, եւ, ի յաւելում դրան, իրենց՝ հայերի աշխատութիւնները»²²:

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ բացի հայերէն սովորելուց եւ իր հայերէնի ուսուցիչ Հ. Աւզերեանի հետ հայերէն-անգլերէն փերականութեան եւ անգլերէն-հայերէն փերականութեան ձեռնարկներ կազմելուց, Բայրոնը կատարել է թարգմանութիւններ հայ մատենագրութիւնից: Այսպէս, 1817-ի մարտի 31-ին Բայրոնը գրում է Թ. Մուրին, որ ինքը հայերէնից անգլերէն է թարգմանել Ս. Պօղոսի եւ Կորնթացիների նամակագրութիւնը. «Արդեօ՞ք գրել եմ Ձեզ, որ թարգմանել եմ առաքելական թղթերից երկուսը՝ Ս. Պօղոսի եւ Կորնթացիների նամակագրութիւնը, որ մեզ մօտ կորած է, բայց հայերէն կայ եւ, ինձ թւում է, շատ արժանահա-

20 ԺԻՐՄՈՒՆՍԿԻ Վ., Արեւմտաւերոպական գրականութեան պատմութիւնից, *Լենինգրադ, «Նաուկա», 1981, էջ 197 (ուսերէն)*:

21 JEAFFRESON J. C., *The Real Lord Byron. New views of the poet's life*, in three volumes, vol. II, Leipzig, Bernhard Tauchnitz, 1883, p. 203.

22 O'BRIEN J. C., *Lord Byron, Friedrich von Schiller and the Mysterious Armenian*, Vienna, "Handes Amsoria", 1966, 10-12, pp. 539-540.

լատ է: Ես այն թարգմանել եմ Ս. Գրքին յատուկ անգլերէնով»²³: Թ. Մուրը այս նամակի վերաբերեալ տալիս է հետեւեալ ծանօթագրութիւնը.

«Այս առաքելական թղթերի վաւերականութեան միակ հաւանական երաշխիքը բխում է այն փաստից, որ Ս. Պօղոսը (Մուշեյմի եւ ուրիշների կարծիքով) մեզ մօտ առաջինը համարուող իր թղթից առաջ, Կորնթացիներին ուղարկած է եղել ինչ-որ մի այլ առաքելական թուղթ: Եւ չնայած սրան, այս թղթերը բոլորեքեան համարուել են անվաւեր: Թէեւ Պրայմեթ Աչըրը, Եոհան. Գրեգորիուսը եւ ուրիշ ուսեալ մարդիկ յաճախակի յիշատակում էին դրանց գոյութեան փաստը հայերէնում, սակայն, իմ կարծիքով, առաջինը Վիստոններն էին, որ այդ լեզուից թարգմանեցին թղթերը եւ յունարէն ու լատիներէն տարբերակների հետ մէկտեղ կցեցին Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան իրենց հրատարակութեանը, որ տպագրուեց 1736-ին: Լորդ Բայրոնի թարգմանութիւնը, որքան ինձ յայտնի է, երբեւէ անգլերէնում արուած առաջին փորձն է, եւ լինելով նրա գրչի արդիւնքը; անշուշտ, պէտք է, որ առաւել հետաքրքրութիւն առաջացնի, եւ ընթերցողը դժգոհ չի մնայ, գտնելով այն յաւելուածում: Իմ ունեցած օրինակին կցուած է իր իսկ ձեռքով արուած հետեւեալ մակագրութիւնը. «Անգլերէն թարգմանեցի (1817, յունուար-փետրուար) Ս. Ղազար վանքում, հայ վանական Հայր Պասկալ Աւգերի օժանդակութեամբ եւ հայերէն բնագրի մեկնութեամբ՝ ԲԱՅՈՐՆ: Ձեռքիս տակ ունէի նաեւ, - աւելացնում է նա, - լատիներէն բնագիրը, որը շատ տեղերում աղաւաղուած է եւ մեծ վրիպումներ ունի»²⁴:

Վերոյիշեալ թարգմանութիւնը Բայրոնն ուղարկում է Ջ. Մըրրէյին՝ հրատարակութեան համար: Սակայն, ինչ-ինչ պատճառներով Մըրրէյը այն չի հրատարակում, եւ Բայրոնը նրան իր 1820-ի մարտի 28-ի նամակում յիշեցնում է այդ մասին. «Կ'ուզենայի իմանալ թէ ի՞նչ եղան Ս. Պօղոսի երկու առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերէնից աւելի քան երեք տարի առաջ...»²⁵: Չստանալով պատասխան, Բայրոնը 1821-ի հոկտեմբերի 9-ի նամակում

23 MOORE TH., *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 347.

24 Նոյն տեղում, էջ 347, 348:

25 Նոյն տեղում, էջ 439:

կրկին հարցնում է Ս. Պողոսի թղթերի մասին. «Ի՞նչն է պատճառը, որ մի կողմ էք դրել Ս. Պողոսի առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերէնից...»²⁶: Մենք չզփտենք Ջ. Մըրրէյը հրատարակել է վերոյիշեալ թղթերը, թէ ոչ: Մեզ յայտնի է, որ Ս. Պողոսի երկու առաքելական թղթերի Բայրոնի թարգմանութիւնը տեղ է գտել 1835-ին Փարիզում հրատարակուած Լորդ Բայրոնի երկերի ժողովածուի միհատորեակում²⁷:

Վենետիկի Ս. Ղազար կղզում Բայրոնը կատարել է որոշ թարգմանութիւններ հայ հին պատմագիրներից: Այսպէս, նա թարգմանել է հատուածներ Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնից, Ներսէս Լամբրոնացու Ատենաբանութիւնից եւ այլն: Այստեղ արժէ յիշատակել, որ դեռեւս ԺԸ դարի առաջին կէսին, ինչպէս նշում է Բայրոնը իր Ջոն Մըրրէյին ուղղուած 1817 թուականի յունուարի 2-ի նամակում, «...երկու Վիստոնները²⁸ Անգլիայում հրատարակեցին Հայոց պատմութեան բնագիրը՝ իրենց իսկ լատիներէն թարգմանութեան հետ մէկտեղ»²⁹: Նշենք, որ դեռեւս 1695-ին Ամստերդամում հայ մատենագիր եւ հրատարակիչ Ղուկաս Վանանդեցին տպագրեց Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը, որից յետոյ եւրոպացի արեւելագէտները սկսեցին աւելի մեծ հետաքրքրութիւն ցուցաբերել հայ ազգի եւ նրա պատմութեան նկատմամբ: «Մինչ այդ,- գրում է հայ անուանի պատմաբան Լէոն (Առաքել Բաբախանեան, 1860-1932),- հայ ազգը ներկայացել էր եւրոպացուն կամ իբրեւ կրօնական մի համայնք, որ ունէր դաւանական իր առանձնաշատկութիւնները, կամ թէ իբրեւ հմուտ եւ ճարպիկ եւ միեւնոյն ժամանակ տգէտ վաճառական, որի ասածներին հաւատ չէր ընծայուում: Խորենացին, Ամստերդամում վերածնուելով, գնաց ցոյց տա-

26 Նոյն տեղում, էջ 536:

27 *The Complete Works of Lord Byron, in one volume*, Paris, published by A. and W. Galigani and Co., 1835, pp. 819-821.

28 Ջորջ եւ Ուիլեամ Վիստոնների հայրը՝ Ուիլեամ Վիստոնը, հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Աղափիրեանի որդիների ուսուցիչն է եղել: Ու. Վիստոնը Հնդկաստանում է սովորել հայերէն - վերադառնալով Լոնդոն այն սովորեցրել իր որդիներին: Վիստոն եղբայրները յետագայում ինքնուսուցմամբ այնքան են խորացել հայերէնի մէջ, որ կարողացել են լատիներէն թարգմանել - 1736-ին Լոնդոնում հրատարակել Մ. Խորենացու Հայոց պատմութիւնը եւ Ա. Շիրակացու Աշխարհացոյցը:

29 MOORE TH., *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 336.

լու արեւմտեան աշխարհին, թէ հայերը մի հին պատմական ազգ են, կարեւոր դեր են կատարել Արեւելքի քաղաքական աշխարհում, շփուելով Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի եւ Բիւզանդիայի հետ»³⁰: Եւ եւրոպացի գիտնականները հետաքրքրում, իրենց ուսումնասիրութիւնների նիւթ են դարձնում նաեւ հայ պատմաճոր Հայոց պատմութիւնը: Այսպէս, օրինակ, Խորենացու աշխատութիւնը աղբիւր է դառնում գերմանացի գիտնական Ե. Շրոյդերի (1680-1756) լեզուաբանական ու պատմական ուսումնասիրութիւնների համար: Մ. Խորենացու երկի Վիստոն եղբայրների թարգմանութիւնը, որը, ըստ մեր ունեցած տեղեկութիւնների, հայոց պատմագիտական կոթողներից կատարուած առաջին թարգմանութիւնն է Եւրոպայում, եւրոպական բանասիրութեան միտքը հրաւիրում է մինչ այդ սակաւ ծանօթ հայ հարուստ մշակոյթի, հայոց պատմութեան եւ մատենագրութեան վրայ, առաջացնելով մեծ հետաքրքրութիւն արեւելագէտների մօտ:

Իսկ ի՞նչն է հանդիսացել Բայրոնի հայերէն սովորելու ցանկութեան շարժառիթը: Նրա հայերէնի ուսուցիչ Յ. Աւգերեանը մի առիթով ասել է, որ Բայրոնը հայերէն է սովորել յատկապէս հայ պատմիչների երկերը թարգմանելու համար, իսկ Ղ. Ինճիճեանն էլ աւելացրել, որ Բայրոնը հայերէն էր սովորում յատկապէս հայ բանաստեղծական արուեստին ծանօթանալու համար: Այս երկու տեսակէտներն էլ համապատասխանում են իրականութեանը: Միանգամայն բնական է, որ հոգով ու էութեամբ դէպի Արեւելք ձգտող բանաստեղծը, Մխիթարեանների միջոցով ծանօթանալով հայ բազմադարեան հարուստ մշակոյթին ու գրականութեանը, պէտք է որ ձգտէր աւելի խորամուխ լինել եւ ուսումնասիրել այն, իսկ դա առանց լեզուի իմացութեան գրեթէ անհնարին էր:

Ս. Ղազար մայրավանքում հայկական ուսումնասիրութիւններ կատարելուց բացի, Բայրոնը սիրել է զբօսնել կղզում, հիանալ նրա գեղատեսիլ բնութեամբ եւ ունեցել է նոյնիսկ իր սիրած անկիւնը՝ ձիթենիները, որոնց հովանու տակ բազմիցս նստել է, երազել, խորհրդածել... «Բայրոնեան» ձիթենիներին իրենց բանաստեղծութիւններն են ձօնել հայ մշակոյթի երախտաւոր, բանաստեղծ Հ. Եղիա Վրդ. Փէչիկեանը (1895-1964), հայ բժիշկ, պատմաբան եւ

30 ԼԷՕ, Երկերի ժողովածու, տասը հատորով, երրորդ հատոր, Հայոց պատմութիւն, գիրք առաջին, «Հայաստան», Երեւան, 1969, էջ 466:

հասարակական գործիչ Վահրամ Թորգոմեանը (1858-1942) եւ հայ բժիշկ, բանաստեղծ ու արձակագիր Արամայիս Սրապեանը (1910-1969):

Հայր Եղիա Վրդ. Փէչիկեանը Պայրընեան ձիթեմիք բանաստեղծութեան մէջ, որը լոյս է տեսել 1924-ին «Բազմավէպում», անդրադառնում է թէ՛ Մխիթար Սեբաստացուն, որը դեռեւս Բայրոնի ժամանումից մէկ դար առաջ հիմնել էր իր միաբանութիւնը, թէ՛ Բայրոնին, որը ողջունել է Մխիթարեան հայրերին, որոնց «տեսքը լուռ ու վրսեմ» հաղորդել է անգլիացի բանաստեղծին Արեւելքի վեհ ոգու մասին: Այստեղ Ե. Փէչիկեանը կերտել է մի մարդու կերպար, որը սիրել է ապրել յաւերժական դիւթանքով ու լսել «հեզամնջիկ ալեաց օրօրը», որին գերել են բնութեան գեղեցկութիւնը, հեռու ակերը, ժողովուրդների ազատութեան մարտերն ու յաղթանակը, որի ողջ էութիւնը հրդեհել է ազատութեան կայծը, եւ նա, Փէչիկեանի արտայայտութեամբ, ցանկացել է

Հումերական ու սոփոկլեան շիրիմներն
 Իր արիւնով սրբել անբիծ անարատ.
 Հանճարներու, Մուսանբու ֆետերուն
 Պինդ շղթաները գերութեան խորտակել:³¹

Նախքան Յունաստան մեկնելը, Բայրոնը վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին, վերջին անգամ հայեացք ձգում մտաւորական-եկեղեցականներին, բացականչում՝

«Քարոզ թող ըլլայ սուրբ ձիթեմիք
 Ու հովանի ընէ այն քայլ մը հողին
 Ըզմայլումիս յաւերժական յիշատակ»³²,

եւ մեկնում ուազմի դաշտ, որտեղ նրան սպասում էր դիւցազնի մահ: Անցել է արդէն աւելի քան մէկուկես դար, բայց այսօր էլ «բայրոնեան» ձիթեմիքները դեռ կան, որոնք խաղաղութեան սուսափիւնով Հայոց կղզի այցելող բազմազգ ուխտաւորների համար, կարծես թէ,

31 Փէչիկեան ՀԱՅՐ ԵՂԻԱ ՎՐԴ., Պայրընեան ձիթեմիք, «Բազմավէպ», 1924, թիւ 4, էջ 339, 340:

32 Նոյն տեղում, էջ 340:

նուագում են «անմահ Լորտին երգերն, յուշերն ու խոհեր»³³:

Վ. Թորգոմեանի «Լորտ Պայրընի ճիթենիէն» բանաստեղծութիւնը, որը գրուել է 1827 թ. Փարիզում՝ դեռեւս Ռ. Որբերեանի կենդանութեան օրօք եւ նուիրուած է նրան «Առ բանաստեղծ բարեկամ իմ Տիար Ռ. Որբերեան. հիացողն Լորտ Պայրընի» մակագրութեամբ, տպագրուել է 1932-ին «Բազմավէպում»: Վ. Թորգոմեանը նկարագրում է «Հայոց» կղզին, Բայրոնի սիրած «հին, գեղեցիկ» ծառը, որը հակառակ իր «հարիւրամեայ եւ աւելի» տարիքին, «դիմադրելով բուք ու հովի», մնացել է միշտ անսասան ու սաղարթախիտ եւ, կարծես թէ, դարձել է ուխտատեղի ինչպէս Ս. Ղազար Ս. Ղազար այցելող ամէն մի հայի, այնպէս էլ «հոն այցելող ամէն հիւրի» համար³⁴: «Լորտ Պայրընի սիրած կանանչ խորհրդաւոր այդ ծառին տակ» բանաստեղծ Վ. Թորգոմեանին թւում էր թէ վերադարձել են երջանկութեամբ լի լցուած «դպրոցական օրերն համայն», եւ նա իր մտորումներով ու երազներով կարծես թէ նստած էր

Ուսանելու դասեր վըսեմ
Սուրբ Ղազարի մատեաններէն՝
Զորս գրեցիմ առատօրէն
Հիւրմուգ, Ագոնց, Բագրատունի,
Հայր Ալիշան անմահունի

Եւ իր հետ միասին կարծես թէ ներկայ էր նաեւ

Լորտ Պայրըն իսկ, ու հատորներ
Գիրկը առած, մեր հայ լեզուն
Կը վերծանէր ան օրն ի բուն
Մտածելով՝ նեցուկ մ' ուժգին
Ըլլալ մէկ օր հեգ Հայ Ազգին,
Զոր արդարեւ անկեղծօրէն
Սիրեց ուժգին սրտին խորէն:³⁵

Միլանի համալսարանի շրջանաւարտ Ա. Սրապեանը, որն

33 Նոյն տեղում:

34 ԹՈՐԳՈՄԵԱՆ Վ., Լորտ Պայրընի ճիթենիէն, «Բազմավէպ», 1932, թիւ 8-9, էջ 380:

35 Նոյն տեղում, էջ 381:

չու՞մ է.

Չկայ ոչ մէկ երազանքի,
Երգի պուրակ՝
Ուր քու ժպիտդ ծաղկած չըլլար...³⁹

Եւ աւելացնում, որ ինքը, նստած Մխիթարեան միաբանութեան պարտէզում՝ «բայրոնեան» ճիթենիներէ արծաթափայլ ճիւղերի հովանու տակ, երազում է, խորհում հայերի մեծ բարեկամի մասին՝ համակուած նրան որոնելու ու գտնելու յոյսով: Մ. Աթմաճեանը հետեւում է նաեւ Բայրոնի դժուարութիւններով լի եւ անհարթ, բայց միաժամանակ հերոսական, ազատատենչ, արդարասէր եւ անմահութիւն տանող կեանքի ընթացքին:

Իսկ անգլիացի Չարլզ Ռիչարդ Գամելը 1922-ին այցելելով Ս. Ղազար, խորապէս յուզուում է այն յարգանքից, որ տածում են Մխիթարեանները Բայրոնի նկատմամբ, եւ յետագայում նշում, որ «Յիշատակն այդ օրուան պիտի մնայ հետս ամբողջ կեանքիս մէջ»⁴⁰: Այնուհետեւ, 1924-ին, Բայրոնի մահուան հարիւրամեակի կապակցութեամբ, նա գրում է մի բանաստեղծութիւն, որտեղ գլխավոր Մխիթարեաններին հաւաստում է.

Դուք արժանի պահեկ էք մեր քերթողին համբալին,
Վասն զի ձեր սրտերուն մէջ կը պատուէք իր անունն.
Իրեն համար ձեր ցեղին հանճարներուն առընթեր,
Քերթողներուն միջեւ ձեր գրտեր էք տեղ մը պատկան...⁴¹,

այնուհետեւ աւելացնում, որ Ս. Ղազար կղզում Բայրոնն անցկացրել է երջանիկ օրեր, ապրել խաղաղ կեանքով, մի պահ մոռացել «հին տարփանքներ, ռիսեր հին», եւ բանաստեղծութիւնն աւարտում հետեւեալ խօսքերով.

Եթէ ունի Անգլիա մարմինը, սիրուն՝ Յունաստան,
Իր հոգիէն, օ՛ն եւ օ՛ն, կը ժառանգէք մաս մը դուք,
Ազնըւագոյնը թերեւս, զի ձեզի հետ կը մընան
Խաղաղութիւնն ու Մտերիմ սէրը եւ ոչ ցաւն ու վիշտ⁴²:

39 Ա.Թ.Մ.Ա.ՃԵԱՆ Մ., Յուշերգ՝ լորտ Պայրընին համար, «Ոսկի գեղօն», Փարիզ, 1967, էջ 93:

40 «Բազմավեպ», 1924, թիւ 4, էջ 109:

41 Գ.ԱՄՄԵԼԼ Զ. Ռ., Լորտ Պայրըն ի Ս. Ղազար, «Բազմավեպ», 1924, թիւ 4, էջ 136:

42 Նոյն տեղում, էջ 113:

Բայրոնի 1816-1818թթ. «հայկական» հանդիպումները նպաստեցին թէ՛ Բայրոնի, թէ՛ Մխիթարեանների փառքի տարածմանը ամբողջ եւրոպայում: Նոյնիսկ անգլիական հասարակութեան բարձր շրջանները, որոնք մինչ այդ խիստ բացասական եւ արհամարհական վերաբերմունք ունէին Բայրոնի նկատմամբ, սկսեցին հետաքրքրուել նրա հայկական ուսումնասիրութիւններով:

Այսպիսով, Ժ.Ռ. դարում Զ. Գ. Բայրոնը հայ գրականութիւն մուտք գործեց ոչ միայն իր երկերով, այլեւ անձամբ մասնակից դարձաւ հայոց լեզուի եւ հայ մշակոյթի վերհանմանը, զնահատմանը եւ տարածմանը եւրոպացիների հետաքրքրութիւնների շրջանակի մէջ: Բայրոնի եւ Մխիթարեանների հանդիպումները առիթ հանդիսացան, որ Ս. Ղազար այցելէն բազմաթիւ օտարերկրացիներ եւ, ինչպէս նշում է Բայրոնի հայոց լեզուի ուսուցիչը, «ի սակս ուսանելոյ նորա ի վանս՝ հռչակեցաւ եւ անուն վանացս»⁴³: Բայրոնից յետոյ Ս. Ղազար եւն այցելել այնպիսի նշանաւոր մարդիկ, ինչպիսիք են Թոմաս Մուրը (1819), Լը Վալյան դը Յլորիվալը (1828), Վալտեր Սկոտը (1832), Հայնրիխ Պետերմանը (1833), Ալֆրեդ դը Միւսէն (1834), Ժորժ Սանդը (1834), Էդուարդ Թէյլորը (1851), Յովհաննէս Ալվազովսկին (1869), Ժակ Օֆենբախը (1870), Էլէնորա Դուլէն (1886) եւ շատ ուրիշներ:

Նշենք, որ Բայրոնի Ս. Ղազար կղզում ունեցած հանդիպումներն օժանդակեցին, որպէսզի հայ մտաւորականութիւնը շատ վաղ, սկսած դեռեւս Ժ.Ռ. դարի սկզբից ծանօթանայ Զ. Բայրոնի ստեղծագործութիւններին: Ճիշտ է վերջիններս հայերէն չեն թարգմանուել մինչեւ Ժ.Ռ. դարի կէսերը, բայց, քանի որ հայ ժողովրդի ճակատագիրը տուեալ ժամանակաշրջանում որոշ իմաստով նման է եղել բանաստեղծի անձնական ճակատագրին (մտաւորական հայերը հիմնականում գործել են հայրենիքից դուրս, որտեղ եւ ստեղծել են հայ մշակութային կենտրոններ), հայ ժողովրդի առաջաւոր զանգուածը հնարաւորութիւն է ունեցել ծանօթանալու Կոստանդնուպոլսի, Չմիւռնիայի, Մոսկուայի, Թիֆլիսի, Վենետիկի, Վիեննայի եւ հայ մշակութային այլ կենտրոններում լոյս տեսնող բազմաթիւ օտարալեզու պարբերականներում բանաստեղծի մասին տեղ գտած յօդուածներին, ինչպէս նաեւ նրա ստեղծագործու-

⁴³ ՏԱՅՅԱՆ ՀԱՅՐ ԴԵՒՈՆԻՎ ՎՐԴ., Լորտ Պայրըն ի Ս. Ղազար, «Բազմալէզ», 1924, թիւ 4, էջ 136:

Թիւնների թարգմանութիւններին: Ի միջի այլոց, յետադայում Բայրոնի ստեղծագործութիւնների հայերէն թարգմանութիւնները եւ նրա մասին հայերէն գրուած յօդուածները հրատարակման առումով նոյնպէս ունեն լայն աշխարհագրութիւն: Դրանք հայերէն հրատարակուել են եւ՝ Հնդկաստանում (Կալկաթա), եւ՝ Ռուսաստանում (Մոսկուա, Ս. Պետերբուրգ, Ռոստով), եւ՝ Իտալիայում (Վենետիկ), եւ՝ Աւստրիայում (Վիեննա), եւ՝ Վրաստանում (Թիֆլիս), եւ՝ Թուրքիայում (Կ. Պոլիս), եւ՝ Ադրբեջանում (Բաքու, Շամախի), եւ՝ Պարսկաստանում (Թեհրան), եւ՝ Հայաստանում, եւ՝ այլուր, որտեղ որ գործել են հայ մշակութային կենտրոնները:

Անհրաժեշտ է նշել, որ Բայրոնի երկերը հայերէն թարգմանութեամբ հրատարակուել են աւելի քան հարիւր անգամ, ընդ որում առանձին գրքերով՝ աւելի քան քսան անգամ: Բայրոնի երկերը հայերէն թարգմանել են քառասունից աւելի հայ գրողներ եւ թարգմանիչներ, այդ թւում այնպիսիք, ինչպիսիք են Մ. Թադիադեանը, Յ. Մասեհեանը, Ղ. Ալիշանը, Ա. Ղազիկեանը, Հ. Թումանեանը, Լեռնեցը, Յ. Միրզայեանը, Յ. Անտոնեանը, Վ. Դաւթեանը, Հ. Սեւանը եւ շատ ուրիշներ: Յատկապէս շատ են հրատարակուել Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը, Դոն Ժուան եւ Շիլիոնի կալանաւորը բանաստեղծութիւնները (կամ հատուածներ զրանցից), ընդ որում միայն զրանցից առաջինին անդրադարձել են վեց թարգմանիչներ՝ Ղ. Ալիշանը, Վ. Անտոնեանը, Լեռնեցը, Յ. Միրզայեանը, Յովհ. Թումանեանը եւ Հ. Սեւանը:

Բայրոնի ստեղծագործութեան հետ հայ գրական-հասարակական մտքի շփումը, բայրոնիզմի դրսեւորումը հայ գրականութեան մէջ բացատրուում է Բայրոնի բազմահնչուն եւ բազմաբովանդակ ստեղծագործութեան մէջ տեղ գտած ազատասիրական, հակաբռնակալական պայքարի ձգտումներով, ինչպէս նաեւ անհատականութեան, ինքնահաստատման գաղափարներով: Բայրոնի բանաստեղծութեան ազատատենչ տրամադրութիւնները, արդարացի պայքարի ռոմանտիզմը, մարգասիրութիւնը եւ լաւատեսութիւնը հայ գրականութեան մէջ, առանձնապէս հայ քաղաքական բանաստեղծութեան վերելքի ժամանակահատուածներում, ըմբռնուել են առաւել պարզութեամբ, հարազատօրէն ու արտասովոր ուժով, արձագանքել են հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին: Այս իմաստով «Հայկական» բայրոնիզմը համաշխարհային բայրոնիզմի զարգացման մէջ գրաւում է իր ուրոյն եւ յատուկ տեղը: Չնայած դրան, Բայրոնի առաջին թարգմանիչներից մէկը՝ հայ նոր քնարերգութեան նա-

հապետ Ղեկոնդ Ալիշանը (1820-1901), մեծարելով Բայրոնին եւ անուանելով նրան ոչ միայն դարի լաւագոյն բանաստեղծ, «այլեւ առաջին ի նոսին վկայեալ է իր յովովից գիտնոց»⁴⁴, միաժամանակ չի բաժանում թախծամոլութեան արտայայտութիւնները նրա Զայլդ Հարովի ուխտագնացութիւնը բանաստեղծութեան մէջ, որի չորրորդ նուագը թարգմանել է հայերէն (այն լոյս է տեսել Վենետիկում 1860-ին Խտալիա վերնագրով, ինչպէս նաեւ վերահրատակուել է 1889-ին, 1891-ին եւ 1901-ին): Ղ. Ալիշանը իր թարգմանութեան մէջ այդ արտայայտութիւնները կամ գեղչել է, կամ էլ իր վերաբերմունքն է ցոյց տուել ծանօթագրութեան միջոցով:

Այդ նոյն ժամանակահատուածում կալկաթայում Բայրոնի ստեղծագործութեանն է անդրադառնում հայ գրող, մանկավարժ, հրապարակախօս, կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի նախկին սան Մեսրոպ Թաղիադեանը (1803-1858), որը Բայրոնին դիտում է որպէս գրական մեծութեան չափանիշ: Մ. Թաղիադեանի թարգմանութիւններում (Ոցէ՛ թէ տղայ միամիտ էի, Տեսի գֆեզ, ո՛հ, յարտասուս), որոնք լոյս են տեսել 1848-ին եւ 1850-ին «Ազգասէր Արարատեան» պարբերականում⁴⁵, զգացում է բայրոնական տրամադրութիւն՝ բողոք եւ յուսախաբուցութիւն, ախտոսանք եւ վրդովմունք, կեանքի հարուածներ եւ շրջապատի անտարբերութիւն:

Հայ բանաստեղծ, մանկավարժ եւ հրապարակախօս Սմբատ Շահազիզը (1840-1907) հայ իրականութեան մէջ առաջիններից մէկն էր, որի գրական գործունէութեան վրայ որոշակի ազդեցութիւն թողեց Բայրոնի քնարերգութիւնը: Այսպէս, դեռեւս 1860 թ. Մոսկուայում լոյս է տեսնում քսանամեայ Ս. Շահազիզի առաջին գիրքը՝ Ազատութեան ժամեր խորագրով, որտեղ հեղինակը, Բայրոնի Պարապութեան ժամեր ժողովածուի նմանութեամբ, երգում է իր ծննդավայրն ու հեռաւոր հայրենիքը, ուսանողական օրերն ու պատանեկան սիրոյ յոյգերը: Բայրոնիզմն իր արտայայտութիւնն է գտել նաեւ Ս. Շահազիզի Լեւոնի վիշտը բանաստեղծութիւնում, որը գրուած է Բայրոնի Զայլդ Հարովի ուխտագնացութիւնը երկի անմիջական ազդեցութեան տակ եւ իր կառուցուածքով, պատմելակերպով, բո-

⁴⁴ ԲԱՅՐՈՆ Զ., Խտալիա (Զայլդ Հարովի ուխտագնացութիւնը բանաստեղծութեան 4-րդ նուագը), թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1860:

⁴⁵ ԹԱՂԻԱԴԵԱՆ Մ., Ոցիւ թէ տղայ, «Ազգասէր Արարատեան», 1848, թիւ 2, էջ 16: - ԹԱՂԻԱԴԵԱՆ Մ., Տեսի գֆեզ ու յարտասուս, «Ազգասէր Արարատեան», 1850, թիւ 50, էջ 400:

վանդակութեամբ եւ գլխաւոր հերոսին համակած թախծի զգացումով շատ ընդհանուր եզրեր ունի Բայրոնի բանաստեղծութեան հետ: Ս. Շահագիր Բայրոնին նուիրուած ներբող ունի նաեւ իր Խորհրդրդածութիւն քանաստեղծութեան մէջ: Ս. Շահագիր իր խօսքն է ուղղում անգլիացի բանաստեղծին, որն իր համար կանգնեցրել է «երկնահաս արձան», եւ որի անբռնադատ «հոգու զեղման պէտք է նախանձեն բոլոր պոետները», իսկ «Անգլիայի փառքը բարձրագոյն է, քան սարերն Ալպեան»⁴⁶, քանի որ այն ծնել է Բայրոն:

ԺԹ. դարի վերջերին նշանակալի առաջընթաց ապրող հայ բանաստեղծութեան վրայ զգալի ազդեցութիւն է թողնում Բայրոնի ստեղծագործութիւնը: Այդ դարի 90-ական թուականներին եւ ի. դարի սկզբին Բայրոնի ստեղծագործութիւններն (չառ բանաստեղծութիւններ Երրայակամ մեղեդիներից, հատուածներ Չայլդ Հարուդի ուխտագնացութիւնից եւ Դոն Ժուանից, առանձին բանաստեղծութիւններ, Շիլիոնի կալամաւորը, Մովսէսէնը) աւելի շատ են թարգմանուել հայերէն ու դարձել քննարկման առարկայ, քան որեւէ այլ ժամանակահատուածում: Հայ գրաքննադատների ուսումնասիրութիւններում Բայրոնը գնահատուում էր որպէս ամենամեծ ումանտիկ, իսկ բայրոնիզմը իր մէջ ամփոփում էր ումանտիզմի գրեթէ ամբողջ էութիւնը:

Այդ ժամանակաշրջանում Բայրոնի քնարերգութեանը դիմելը՝ Շիլիոնի կալամաւորի, Չայլդ Հարուդի ուխտագնացութեան առանձին հատուածների թարգմանութիւնները, ինչպէս նաեւ Բայրընին բանաստեղծութիւնը գրելը, հայ մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի համար պատահական երեւոյթ չէին: Նա այդ բանաստեղծութիւնը, ըստ երեւոյթին, գրել է Շիլիոնի կալամաւորը բանաստեղծութեան թարգմանութեան առիթով: Առաջին անգամ Բայրընին բանաստեղծութիւնը տպագրուել է վերոյիշեալ բանաստեղծութեան թարգմանութեան հետ միասին, 1896-ին Թիֆլիսում: Ընդհանրապէս, 1894-1896 թթ. Յ. Թումանեանի ստեղծագործական կեանքում համարուել են բայրոնեան շրջան: Անգլիացի բանաստեղծի ազատատենչ ոգին համընկնում էր Թումանեանի այդ շրջանի խոհերի ու տրամադրութիւնների հետ եւ արտացոլում նրա մի շարք ստեղծագործութիւններում: Ինչպէս յայտնի է, 1816-ին

⁴⁶ ՇԱՀԱԶԻՉ Ս., Երկեր, Հայպետհրատ, Երեւան, 1947, էջ 55: - ՇԱՀԱԶԻՉ Ս., ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՅՈՎՀ., ԾԱՏՈՒՐԵԱՆ ԱԼ., ՄԻՐԱՔԵԱՆ Վ., Երկեր, «Սովետական գրող», Երեւան, 1980, էջ 32:

Անգլիայից հեռանալուց յետոյ, Բայրոնի ողջ քնարերգութիւնը լի է խռովայոյց, ըմբոստ գաղափարներով: Չայլդ Հարուդի ուխտագնացութիւնը, Մովսէէնը բանաստեղծութիւններում արդէն զգացւում է այդ տրամադրութիւնը, սակայն այն աւելի ուժգին եւ կրքոտ է հնչում նրա կեանքի վերջին տարիներին, երբ ռոմանտիկ բանաստեղծը մտել էր սերտ կապի մէջ իրական կեանքի հետ եւ աւելի մօտ էր կանգնած քաղաքական պայքարին՝ դրա մէջ տեսնելով իր կոչումն ու գործը: Անգլիացի բանաստեղծի՝ ազատութեան համար պայքարող ժողովուրդների անմիջական մասնակցի, ռազմատենչ ոգին թանկ է եղել Թումանեանի համար, քանի որ 1890-ական թուականներին Արեւմտեան Հայաստանում արդէն սկսուել էին հայկական կոտորածները, իսկ կոպկասում ծայր էին առել հալածանքները հայ մշակութային գործիչների եւ ազգային-ազատագրական շարժման մասնակիցների նկատմամբ: Եւ բնական է, որ «հայոց վշտի» երգչին հարազատ էր «համաշխարհային վշտի» երգչի թախիծը: Թումանեանը գրում է Գաղթականի երգը (1896), Տրտմութեան սաղմոսներից (1898), Պանդուխտ եմ, քոյրիկ (1902), Հայոց լեռներում (1902), Հայոց վիշտը (1903) բանաստեղծութիւնները:

Թումանեանը Բայրընի (1896) ձօներգում գովերգում է ազատատենչ ժողովուրդների նուիրեալ բարեկամ անգլիացի բանաստեղծին, որն իր կեանքը զոհել է յանուն Յունաստանի ազատութեան.

Ի՛նչ մեծ հանճարով, ո՛վ հսկայ պոետ,
Ազատութիւնը կաշկանդող շղթան
Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ
Եւ քաղցրացրել ես վիշտը գերութեան⁴⁷:

Բայրոնը առանց վախենալու անգլիական ազնուականութեան գայրոյթից՝ համայն աշխարհին յայտնում է, որ Անգլիան բանտ է, եւ դառը ծաղրով նշաւակում Անգլիայում գործող օրէնքները: Ահա թէ ինչու Թումանեանը գրում է.

Ի՞նչպէս դարձրել ես քանոը հայրենիք
Եւ ողջ աշխարհը լայնարձակ մի քանու...⁴⁸

47 ԹՈՒՄԱՆԵԱՆ Յ., Երկերի ժողովածու, հտ. 2, Երեւան, 1969, էջ 145:

48 Նոյն տեղում:

Եւ ոչ միայն Թումանեանը, այլեւ Հայ բանաստեղծներից շատ-շատերը ներբողներ են ձօնել Բայրոն բանաստեղծին, ազատութեան մեծ մարտիկին, որի սրտին մօտ է եղել տանջուած ու տառապած ժողովուրդների ճակատագիրը:

Ռուբէն Որբերեանի (1874-1932) Ծփաւմներ բանաստեղծութիւնը, որն առաջին անգամ տպագրուել է 1906-ին Գահիրէում, նոյնպէս գրուել է Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը բանաստեղծութեան ազդեցութեան տակ, իսկ դրա նախերգանքը ամբողջութեամբ նուիրուած է Բայրոնին: Այդ բանաստեղծութիւնում պատկերուում են Հայ ժողովրդի կրած տառապանքները, նշուում մեր ճնշուած, թշուառ Հայրենիքի փրկութեան ու ազատութեան ուղիները, իսկ անգլիացի բանաստեղծի կերպարը ուրուագծուում է կենսագրական յաջորդականութեամբ՝ այն երկրների իրադրութեան վրայ, որտեղ նա եղել է, նշելով նրա կեանքի եւ ուխտագնացութեան բոլոր փուլերը: Բանաստեղծութեան նախերգանքում մեր առջեւ վեր է յառնում բռնակալութեան դէմ հանդէս եկող եւ Յունաստանի ազատութեան համար պայքարող ազատատենչ մարտիկը: Այստեղ Ռ. Որբերեանը ի ցոյց է դնում նաեւ Բայրոնի հետաքրքրասիրութիւնը Հայերի նկատմամբ, անդրադառնում նրա Հայերէնի ուսումնասիրութիւններին:

Բայրոնի կեանքին եւ ստեղծագործութեանն են անդրադարձել նաեւ բանաստեղծներ Հրաչեայ Յովհաննիսեանը, Սարմէնը, Նայիրի Զարեանը, Սուրէն Մուրադեանը, Անահիտ Պարսամեանը, Վահագն Կարենցը եւ ուրիշներ: Ընդհանրապէս, Հայ գրողների Բայրոնին ձօնած տողերը գրուած են դէպքերի անմիջական մղումով եւ արժէքաւոր են յատկապէս իրենց անսահման անկեղծութեամբ ու անմիջականութեամբ եւ հիմնականում արծարծում են նոյն ազատասիրական գաղափարները, որոնք յատուկ էին անգլիացի բանաստեղծին:

Բայրոնին, որի ստեղծագործութիւնը հարուստ ու բազմազան արձագանք է ստացել Հայ գրական կեանքում եւ առայսօր շարունակում է յուզել Հայ ընթերցողին, որպէս բարձր արուեստի կերտողի՝ անդրադարձել են նաեւ Հայ նկարիչները: Այսպէս, Հայ ծովանկարիչ Մկրտիչ Ծիւանեանը (1848-1906) անդրադարձել է Բայրոնեան թեմա-

49 «Մասիս» (1852 թթ. 1908 թթ. 4. Պոլսում լոյս տեսած Հայ քաղաքական, տնտեսական, գրական եւ բանասիրական օրաթերթ, շաբաթերթ, ամսաթերթ), 1882, մայիս:

յին եւ ստեղծել Լորդ Բայրոնի երազը նկարը, որը 1882-ի մայիսին ցուցադրուել է Կ. Պոլսում⁴⁹: Բայրոնին նուիրուած երկու նկար ունի համաշխարհային ծովանկարիչ Յովհաննէս Ալվազովսկին (1817-1900)՝ Բայրոնի գիշերային զրօսանքը Վենետիկում (1887) եւ Բայրոնի այցը Միխթարեաններին Ս. Ղազար կղզում (1888):

Ուսումնասիրելով հայանգլիական գրական առընչութիւնները մենք նկատում ենք, որ շատ անգլիական բանաստեղծներ (Ռի. Շեքսպիր, Ռ. Բեռնս, «լճային դպրոցի» ներկայացուցիչներ՝ լեյկիստներ, Թ. Մուր, Պ. Շելլի, Զ. Բայրոն եւ այլն) են թարգմանուել հայերէն, բայց, այնուամենայնիւ, Բայրոնը թերեւս անգլիացի միակ բանաստեղծն է, որը հայերի նկատմամբ ունեցած իր սիրոյ ու յարգանքի համար, միշտ յիշուում է եւ արժանանում բարձր գնահատականի հայ իրականութեան մէջ:

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐԵԱՆ

Episodes from Byron's correlation
with the Armenian reality
(Summary)

Anahit Bekarian

The article studies Byron's 1816 visit to the Island of St. Lazarus in Venice, where he met the ecclesiastical intellectuals of the Mekhitarist Congregation.

Byron's interest in the island of St. Lazarus and its residents does not limit itself to the interest shown by an ordinary traveller or tourist; instead, it becomes the basis of fecund cooperation between the Mekhitarists and Byron.

The article studies different episodes in that cooperation and their repercussions in Armenian reality. Byron's Armenian research has been reflected in the studies of Armenian and foreign authors. Many Armenian poets and artists have built Byron's form into their creations.